Սմբատ Խ. Հովհաննիսյան
*Պատմ. գիտ. թեկնածու*

# ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ԱՅԼԱՑՈՒՄԸ. «ՆՈՐ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

## Մաս երկրորդ: Մտակեցվածքների պատմություն. երեք հարացույց (կառուցվածքային, շարային կամ քանակային և համաբերական)*

**Բանալի բառեր** – Մտակեցվածքների պատմություն, «առանց մարդկանց պատմություն», մարդակենտրոն պատմություն, մտակեցվածքների «կառուցվածքային», «շարային կամ քանակային» և «համաբերական» պատմություն:

## Մուտք

Արդեն առիթ ունեցել ենք անդրադառնալու պատմագիտական մտքի՝ անընդմեջ ճգնաժամային իրավիճակներում հայտնվելուն, որը միշտ հանգեցնում է մտահոգնոր փոխակերպությունների[1]: Աննալների դպրոցի Երրորդ սերնդի դեպքում այն արգասավորվեց նախ և առաջ «քանակային» և «շարային» պատմությունների, իսկ ապա (դրան զուգահեռ)՝ «մտակեցվածքների», «պատմական մարդաբանության» և «հիշողութենական պատմության» մշակմամբ:

Արդեն 1960-ական թվականներին լեզվաբանության, ընկերաբանության և ազգաբանության՝ պատմագիտությանն ուղղված մարտահրավերների համածիրում ծավալվում է հետազոտական մի ողջ ընթացք[2]: Խնդիրն էր հաղթահարել դեռևս Բրոդելյան սերնդի ժամանակներում որոշարկված խզումի՝ «առանց մարդկանց պատմության» և «մարդակենտրոն պատմության» երկբևեռ լարվածությունը: Եվ պատահական չէր, որ մարտահրավերներին պատասխան տալու ցանկությունը հանգեցրեց Ֆերնան Բրոդելի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.06.2016: Առաջին մասը տես **Ս. Հովհաննիսյան**, Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն»: Մաս առաջին: Հետկառուցաբանական հայեցակարգը և պատմության «քանակային» կամ «շարային» ըմբռնումը, «ՎԷմ», 1 (2012), էջ 62-83:

1 Տես **Ս. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 62-83:

2 Տես **A. Про**, Двенадцать уроков по истории, М.: Российск. гос. гуманит. ун-т, 2000, с. 45.

պատմագիտական հայեցակարգում պատճառականության (determinism) ակտիվացման և «մտակեցվածքների պատմության» անտեսման հիմնախնդրի վերանայմանը[3]: Մասնավորապես, Բրոդելի մոտ պատճառականության ակտիվացումն արդյունք էր «երկար տևողության» և աշխարհագրության համադրական մի մոտեցման, որը հույժ տարբերվում էր Լյուսիեն Ֆևրի «կարելիական» (possibilism) աշխարհագրությունից: Այստեղից էլ՝ Բրոդելի կողմից «մտակեցվածքների պատմության» անտեսումը, քանի որ, ըստ նրա, «մտային (mental) շրջանակը» կարող է «երկար տևողության համար բանտ ձևավորել»[4]: Չնայած պատմագիտության (ու նաև Աննալների դպրոցի կայացման) մեջ Բրոդելի զգալի ավանդին՝ պատմատեսության մեջ նման թերացումը լուրջ բացթողում էր:

Մյուս կողմից՝ մտակեցվածքների պատմության աննալական ըմբռնումները միանշանակորեն չընդունվեցին գիտական աշխարհում: Առաջին քննադատական սլաքներն ուղղվեցին Իտալիայից[5]: 1970-ական թվականներից **Ֆրանկո Վենտուրին** հայտարարեց նոր գաղափարների, ստեղծագործական ուժերի անհետացման մասին՝ հօգուտ առանց դինամիզիմի և ինքնատիպության (originalité) հասարակ մտակեցվածքների կառույցների[6]: Մի քանի տարի անց **Կարլո Գինզբուրգն** ընդլայնեց քննադատությունը: Նա մերժում էր «մտակեցվածք» հասկացությունը երեք պատճառով: **Նախ՝** դրա բացառիկ հաստատակամությունը աշխարհընկալման անգործուն (inerte), աղոտ և անգիտակից տարրերի նկատմամբ, ինչը հանգեցնում է խելամտորեն և գիտակցաբար արտահայտած գաղափարների նշանակալիության թերագնահատմանը: **Այնուհետև՝** քանի որ այն անտեղի հնարավոր է համարում բոլոր հասարակական միջավայրների բաժանումը միևնույն ստորոգությունների (catégories) և ներկայացումների միջև: Եվ **վերջապես**, քանակային և շարային մոտեցման (démarche) հետ նրա դաշինքը, որի դեպքում (միասին վերցված) նյութականանում է մտքի բովանդակությունը, ձգտում է առավել կրկնվող ձևակերպումների և ժխտում է առանձնահատուկը[7]:

1990 թվականին արդեն **Ջոֆրի Լլոյդն** էլ ավելի ամրապնդեց մեղադրանքը: Քննադատությունը վերաբերում էր մտակեցվածքների պատմության երկու հիմնարար ստորոգություններին. **մի կողմից՝** ողջ հասարակությանը գաղափարների և համոզմունքների (croyances) կայուն և միատեսակ ամբողջականություն վերագրելը, **մյուս կողմից՝** անհատների բոլոր մտքերն ու արարքները միասնական մտակեցվածքների համակարգի կողմից կառավարվելու ընդունումը[8]:

3 Նկատենք, որ Բրոդելն իր «Միջերկրածովը և Միջերկրածովյան ավազանը Ֆիլիպ II-ի դարաշրջանում» մենագրության մեջ բազմիցս շեշտադրումներ է կատարում պատմության մշակութային և երևակայական գործոններին, բայց աչքաթող է արել «մտակեցվածքների պատմություն» հղացքը: Տես **R. Forster**, Achievements of the Annales School, The Journal of Economic History, 38 (1978), pp. 58-76

4 **F. Braudel**, On History, Chicago: University of Chicago Press, 1980, p. 32.

5 Ավելի մանրամասն տես Florence Hwulak, "En avons-nous fini avec l'histoire des mentalités ?", Philonsorbonne [En ligne], 2 (2008), URL://http://philonsorbonne.revues.org/173 (13.11.2015); **R. Chartier**, "La nouvelle histoire culturelle existe-t-elle?", Les Cahiers du Centre de Recherches Historiques [En ligne], 31 (2003), URL://http://ccrh.revues.org/291?lang=en (13.11.2015).

6 Տես **F. Venturi**, Utopia e riforma nell'Illuminismo, Turin, Einaudi editore, 1970.

7 Տես **C. Ginzburg**, Il Formaggio e i vermi. Il cosmo di un mugnaio del '500, Turin, Einaudi editore, 1976.

8 Տես **G. Lloyd**, Demystifying Mentalities, Cambridge, Cambridge University Press, 1990.

Իսկ **Միշել դը Սերտոն** (Michel de Certeau) և **Պոլ Վեյնը** (Paul Veyne)[9] կարծում էին, որ մտակեցվածքների պատմությամբ խանդավառվելն ավելի շատ պատմագետների հանրությանը փոփոխություններ, քան նրանց գիտակարգին ձեռքբերումներ է բերում:

Անկախ Աննալների կողմից առաջադրված «մտակեցվածքնրի պատմության» դեմ արված քննադատություններից, որի առավել հանգամանալի քննությունը թողնում ենք մեկ այլ առիթի, կասկած չի հարուցում այն, որ շնորհիվ այդ ուղղության՝ պատմագիտության մեջ բացվում է հետազոտական նոր մի տիրույթ, որն ուղեկցվում է նաև մտածական նոր կառույցների և մշակութային պրակտիկաների վերհանմամբ ու վերարժևորմամբ: Վովելի դիպուկ ձևակերպմամբ՝ «Այս նոր (կամ վերագտնված) օբյեկտների վրա կարելի էր փորձարկել դարմանման միանգամայն նոր մեթոդները՝ փոխառված մերձավոր գիտակարգերից, ինչպիսիք են լեզվաբանության և սեմանտիկական վերլուծության մեթոդները, սոցիոլոգիայի վիճակագրական միջոցները կամ մարդաբանության որոշ մոդելներ»[10]: Արդյունքում Աննալների նոր սերնդին հաջողվում է վերականգնել մի կողմից՝ Դպրոցի հոգեմտավոր միասնությունը, մյուս կողմից՝ պատմության և/կամ պատմագիտության «արտոնյալ դիրքը»՝ ներկայացնելով պատմության «գիտական օրինականության (լեգիտիմության) նոր ապացույցներ»[11]:

## Գ. Մտակեցվածքների պատմություն

1960–1970-ական թվականների ընթացքում աստիճանաբար սկսում է կրկին շրջանառվել «մտակեցվածք» եզրը՝ բնորոշելու Աննալների դպրոցի (և ոչ միայն) ներկայացուցիչների աշխատանքն ինտելեկտուալ պատմության տիրույթում: Ընդ որում՝ շոշափելով պատմագիտության գրեթե ողջ հետազոտական տիրույթը՝ առտնին կյանքից մինչև պետական կառույց, անհատական վարքից մինչև կոլեկտիվ պատկերացումներ և այլն[12]: Հարկավ, նման մոտեցումն իր ողջ զանազանությամբ հնարավորություն էր տալիս նոր հավասարակշռություն հաստատել պատմագիտության և բազմաթիվ այլ հումանիտար գիտությունների հետ:

Յուրացնելով վերլուծության գործողություններն ու մեթոդները, որոնք սոցիալ-տնտեսական մեթոդաբանությունից էին քաղված, մտակեցվածքների պատմությունը (ընդգրկուն իմաստով) կարողանում է զբաղեցնել պատմագիտության առաջնագիծը և պատասխանել նրա առջև ծառացած մարտահրավերներին:

Նկատենք, որ պատմագիտական ցանկացած հղացք (եզրույթ, հայեցակարգ և անգամ հարացույց), որպես օրենք, զուրկ է միակերպությունից: Անգամ միևնույն պատմագիտական դպրոցի ծիրում միաժամանակյա մշակման

9 Տես **Histoire des mentalités**, URL://http://lichistoiredijon.forumperso.com/t27-l-histoire-des-mentalites (04.03.2015).
10 **R. Chartier**, "Le monde comme representation", In: Annales. Économies, Sociétés, Civilisations, 6 (1989), p. 1506.
11 **Про А.**, указ. соч., с. 46.
12 Տես **J. Tosh**, The Pursuit of History: Aims, Methods, and New Directions in the Study of Modern History (Revised Third Edition), London: Longman, 2002, p. 275.

դեպքում դրանց շուրջ ծավալվող դիսկուրսների բազմակերպությունը հանգեցնում է դրանց տարասեռ ըմբռնմանն ու կիրառությանը: Ըստ այսմ՝ եթե «մտակեցվածք» հղացքը դիտարկենք ինքնին Դպրոցի ծիրում, կտեսնենք, որ գոյություն ունեն մոտեցումների զանազանություններ և տարբեր փորձառություններ: Ընդհանուր առմամբ մտակեցվածքի ըմբռնման այդ տարբերությունները պայմանականորեն դիտարկել ենք եռառիթմ ծավալումով՝ 1) **«կառուցվածքային»**, 2) **«շարային» կամ «քանակային»**, 3) **«համաբերական» (intégration)**[13]: Ուշագրավ է, սակայն, որ դրանք, չնայած իրենց տարբեր մոտեցումներին ու փորձառությանը, ներկայացնում են մեկ ամբողջություն: Ընդ որում՝ **միավորվում են ոչ այնքան հիմնախնդրի սահմանմամբ, որքան հիմնախնդրի հետ ունեցած հաղորդակցությամբ**, որն ինքնին ենթադրում էր ոչ միարժեք մոտեցումներ: Այլորեն ասած՝ հարաբերությունների նման ըմբռնումը չի ենթադրում հրաժարում դրանց առանձին-առանձին լինելու հնարավորության հայեցակարգից:

Եվ արդ, 1950-ական թվականների կեսից[14] Ռոբեր Մանդրուն[15], իսկ ապա Ժորժ Դյուբին[16] (Ֆևրի ազդեցությամբ) կրկին պատմագիտության հետազոտական ոլորտ են ներբերում «մտակեցվածք» հղացքը (որը պայմանականորեն կոչեցինք **«կառուցվածքային»**): Ընդ որում՝ մտակեցվածքի ֆևրյան հայեցակարգը վերահաստատվում է արդեն պատմագիտական բոլորովին այլ հեռանկարում, քան էր բրոդելյան հայեցակարգը: Դա պայմանավորված էր տնտեսական պատմությունից հիասթափությամբ. «Գիտնականները հրաժարվում էին հասարակության և քաղաքակրթության (XVIII դարին նախորդող) պատմությունը նրա՝ տնտեսությունից ունեցած կախվածությամբ մեկնաբանելուց»[17]: Իսկ արդեն 1970-ական թվականներին «մտակեցվածքների պատմությունը», չնայած իր անորոշությանը, սկսում է «ռազմավարական այնպիսի դեր խաղալ, ինչպիսին «սոցիալա-

13 Նկատենք, որ **Ագիռե Ռոխասն** (Aguirre Rojas) առաջարկել է տիպաբանման մեկ այլ մոդել, որտեղ նա առանձնացնում է մտակեցվածքի ըմբռնման հինգ հայեցակարգ՝ 1. ինքնաբավ կամ ինքնուրույն, 2. տրամասութային կառույցների հնէաբանական կամ ծագումնաբանական, 3. նորդրապաշտական (նեոպոզիտիվիստական), 4. սոցիոլոգիական կամ սոցիալ-տնտեսական և 5. շարային մոդելները: Ավելի մանրամասն տես **K. A. Агирре Рохас**, Критический подход к истории французских "Анналов", М., Издательство: Кругъ, 2006, с. 149-152: Իսկ ռուս հետազոտող Արոն Գուրևիչի տիպաբանման համաձայն՝ մտակեցվածքների տեսության «երկու ուղղություն կար»՝ 1. «քանակային» կամ «շարային» (Պիեր Շոնյու և Ֆրանսուա Ֆյուրե) և 2. Համընդգրկուն (Ժորժ Դյուբի և Ժակ Լը Գոֆֆ): Ավելի մանրամասն տես **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа "Анналов", М.: Центр гуманитарных инициатив, Университетская книга, 2014, с. 161-162:

14 Խոսքը 1958 թվականին համատեղ գրված «Ֆրանսիական քաղաքակրթության պատմություն» երկհատորանոց աշխատության մասին է, որտեղ հեղինակներն արդեն իսկ շոշափում են «մտակեցվածքի թեման»: Տես **G. Duby et R. Mandrou**, Histoire de la civilisation française, Paris, A. Colin, 1958, 2 volumes.

15 Տես **R. Mandrou**, "Histoire sociale des mentalités modernes", **Annuaire de la VIesection de l'EPHE**, année 1963-1964, p.57-58; Idem: Introduction à la France moderne. Essai de psychologie historique, Paris, Albin Michel, 1961; Idem: L'Histoire des mentalités, in article «Histoire», 5, Encyclopedia Universales, Vol. 8 (1968), p.436-438; Idem: "Histoire sociale et histoire des mentalités", La Nouvelle critique, 49 (1972), pp. 41-44; etc.:

16 Տես **G. Duby**, "La feodalite? Une mentalite medievale", In: Annales. Économies, Sociétés, Civilisations. 13e année, N. 4, 1958. pp. 765-771; Idem: "L'Histoire des mentalités", in Ch. Samaran (ed.), **L'Histoire et ses methods (**Encyclopédie de la Pléiade (n°11)), Gallimard, Paris, 1961, pp. 937-966; Idem: «L'histoire vivante», L'Arc, 18 (1962), pp. 65-72; ևն.

17 **Ж. Дюби**, "Развитие исторических исследований во Франции после 1950 года", Одиссей. Человек в истории. М., 1991, с. 53.

կան» հղացքը 1930-ական թվականներին»[18]:

Նկատենք, որ թեպետ հետազոտողները մինչ այդ գիտեին «մտակեցվածք» եզրույթի՝ **ինչ տեսությամբ կիրառելը**, սակայն բաց էր մնում **ինչպես կիրառելու** հարցը: Ուստի պատմագիտության մեջ լայն կիրառություն ստացան հոգեբանական, մշակութաբանական, հիշողութենական և այլ հայեցակարգերի նորովի համադրման փորձառությունները: Դրանցից հոգեբանական դիտանկյունը հատկապես առանցքային նշանակություն ստացավ նոր հայեցակարգի մշակման ճանապարհին: Թե՛ Մանդրուի և թե՛ Դյուբիի ուշադրությունը կենտրոնանում է «հոգեբանական ստորոգությունների ուղղությամբ ոչ պակաս, հնարավոր է և անգամ ավելի շատ, քան ինտելեկտուալ ստորոգությունների»[19]:

Ուշագրավ է, որ «մտակեցվածքի» հոգեբանական կողմի շեշտադրումով այն միևնույն ժամանակ զետեղվում է սոցիալական պատմության և մշակույթի պատմության հատման միջակայքում. «Յուրաքանչյուր պատմական հոգեբանություն, ցանկացած մտակեցվածքների պատմություն, անկասկած, սոցիալական պատմություն է: Սակայն, բացի դրանից, այն նաև մշակույթի պատմություն է»[20]: Ընդհանուր առմամբ, ասվածը ենթադրվում էր տնտեսական և սոցիալական պատմությունների գերակայությունից, քանի որ՝ «տեղակայել սոցիալական ֆենոմենները տնտեսական ֆենոմենի պարզ շարունակականության մեջ, նշանակում է սահմանափակել հարցմունքի դաշտը (le champ d'interrogation), նշանակում է աղքատացնել մասնավորապես հիմնախնդիրը, նշանակում է հրաժարվել որոշ էական ուժային գծերի հստակ ընկալումից»[21]:

Իրականում տնտեսական գործոնի կախվածությունից ձերբազատումը ենթադրում էր կարողական (potentielle) վիճակներ, որոնցով հնարավոր էր դառնում համակարգ ներբերել ինչպես տնտեսականը, այդպես և ար-

18 **Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia**, Les courants historiques en France (19e–20e siècle), Armand Colin, Paris, 2005, p. 230.

19 **R. Chartier**, "Intellectual History and the History of Mentalities", in: **D. La Capra** and **S. L. Kaplan** (ed.), Modern European Intellectual History. Reappraisals and New Perspectives, Cornell University Press, 1982, p. 23.

20 **R. Mandrou**, Introduction à la France moderne. Essai de psychologie historique, Paris, Albin Michel, 1961, p. 353. Այստեղ չենք քննարկելու այն հարցը, թե արդյոք գիրքն ամբողջովին կարելի է վերագրել Մանդրուին, թե այն նաև Ֆեբրի գրչին է պատկանում: Ասենք, որ գիրքը գրվել է Ֆեբրի նյութերի հիման վրա: Սակայն աշխատության համահեղինակությամբ հրատարակումը, ինչպես եղավ Ֆեբրի հետմահու մյուս աշխատության դեպքում (տես **L. Febvre** et **H.-J. Martin**, L'apparition du livre, Paris: Les Éditions Albin Miche, 1958), անհնար եղավ: Բանն այն է, որ դրան ընդդիմացավ Բրոդելը, որը կարծում էր, թե գրքում արծարված պատմատեսությունը ոչ մի ընդհանրություն չունի Ֆեբրի հետ: Թեպետ Մանդրուն գիրքը հրատարակեց միայն իր անունով, այդուամենայնիվ այն նվիրեց ուսուցչին՝ Լյուսիեն Ֆեբրին: Գրքի հրատարակումից անմիջապես հետո սկսվեցին մեղադրանքներն առ այն, որ նա օգտագործել է Ֆեբրի նյութերը, գաղափարները և այլն, իսկ Ֆեբրի ձեռագիրն անհետացել էր: Եվ երկար ժամանակ այս հարցը բաց էր մնացել, մինչև 1996 թ. Թերեզ Շարմասոնն ու Բրիջիտ Մազոնը վերջ տվեցին քննարկումներին. Ֆեբրի ձեռագիրը հայտնաբերվեց Բրոդելի արխիվում (դրանք 1966 թ. տեղափոխվել էին Տոկվիլի դղյակ): Ավելի մանրամասն տես **Th. Charmasson** et **B. Mazon**, Introduction, in **L. Febvre**, "Hnneur et Patrie". Une enquête sur le sentiment d'honneur et l'attachement à la patrie. Cours professé au Collège de France en 1945–46 et 1947. Texte établi, présen-té et annoté par Thérèse Charmasson et Brigitte Mazon, Paris: Librairie académi-que Perrin, 1996, pp. 14–18; **F. Lebrun**, "Braudel, Febvre, Mandrou: bataille d'historiens", L'Histoire, 226 (1998), p. 23–24.

21 **G. Duby,** Les sociétés médiévales: une approche d'ensemble. In: Annales. Économies, Sociétés, Civilisations. 26e année, 1 (1971), p. 2.

տատնտեսականը[22]: Մյուս կողմից՝ այդ կախվածությունից ձերբազատվելը չէր նշանակում ընդհանրապես հրաժարվել դրանից, այլ «զբաղվել տնտեսական պատմությամբ»՝ միևնույն ժամանակ «գիտակցաբար խուսափելով վիճակագրական և շարային մեթոդների կիրառումից»[23]: Այստեղ բացահայտվում է «հասարակության էվոլյուցիայի մեջ նյութականի և մտակեցվածքների փոխհարաբերության» հիմնախնդիրը[24]: Վերջինս կարևորվում էր թե՛ Մանդրուի և թե՛ Դյուբիի կողմից, զի նրանք մտակեցվածքների պատմության մեջ տեսնում էին սոցիալական պատմության հետազոտության համար անհրաժեշտ լրացումը, որը հնարավոր էր նյութական սկզբնահիմքի միջոցով[25]: Ըստ այդմ՝ Գուրևիչի ձևակերպմամբ՝ «մտակեցվածքների հետազոտությունը չի հեռացնում սոցիալ-տնտեսական հիմնախնդրից. այն դրանք դնում է ավելի տարողունակ և համընդգրկուն համատեքստում» [26]:

Սա էլ իր հերթին հանգեցնում է տեսականի և իրականի փոխհարաբերությունների հարցի վերանայմանը: Բանն այն է, որ մտակեցվածքի պատմության այս հայեցակարգի էական կողմը նրա՝ իրականության մեջ ներառվածությունն է: Այս համատեքստում կարևորվում է այն, որ հետազոտողները ստիպված չլինեն հեռանալ կոնկրետից. «Մտակեցվածքը պետք է նաև զետեղվի իրականության մեջ, որը նրան շրջապատում է, հիմնավորում է կամ, ավելի ճիշտ, նրան բացատրում է»[27]: Եվ, որ հույժ կարևոր է, չվերագրեն «մտային կառույցներին չափազանց ինքնուրույնություն՝ նյութական կառույցների հանդեպ», որոնք որոշարկում են հենց «մտային կառույցները»[28]: Այլ կերպ ասած՝ «Եթե ուզում ենք, որպեսզի սոցիալական պատմությունը հառաջանա և անկախություն նվաճի, անհրաժեշտ է ներքաշել մի ուղու մեջ, ուր կլծորդվեն նյութական քաղաքակրթության պատմությունն ու կոլեկտիվ մտային պատմությունը»[29]: Մի բան, որն իր հերթին նպաստեց այնպիսի ըմբռնումների, հայեցակարգերի ու հղացքների բազմացմանը, որոնք հույժ անհրաժեշտ էին մտակեցվածքների պատմության կայացման ու օրինականացման համար: Ավելին՝ դրանք նպաստավոր էին ինքնին պատմագիտության համար: Այս իրողությունը, որը բխում էր կառուցվածքային կանոնավորման պայմանականություններից, առաջադրում էր և «մտակեցվածքների պատմություն» հղացքի սահմանազատման հարցը:

Ըստ այսմ՝ որքան էլ հետազոտողները փորձեն «մտակեցվածքների

---

22 Նյութական կյանքի և մտակեցվածքների միջև կապի «ավելորդ «շտկումից» չխուսափելու» իրողությունը նկատել է և Գուրևիչը: Տես **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа “Анналов”, с. 177–178:

23 **Ж. Дюби**, “Развитие исторических исследований во Франции после 1950 года”, Одиссей. Человек в истории. М., 1991, с. 51.

24 Տես **Ж. Дюби**, Трехчастная модель, или Представления средневекового общества о себе самом/ Пер. с фр. Ю.А. Гинзбург, М.: Языки русской культуры, 2000, с. 18.

25 Տես **Ж. Дюби**, “Развитие исторических исследований во Франции после 1950 года”, Одиссей. Человек в истории. М., 1991, с. 53.

26 **А. Я. Гуревич**, Проблема ментальностей в современной историографии, в книге: Всеобщая история: Дискуссии, новые подходы. Вып. 1., М., 1989, с. 79.

27 **R. Mandrou**, Le baroque européen: mentalité pathétique et révolution sociale. In: Annales. Économies, Sociétés, Civilisations. 15e année, 5 (1960), p. 899.

28 **G. Duby**, Les sociétés médiévales: une approche d’ensemble. In: Annales. Économies, Sociétés, Civilisations. 26e année, 1 (1971), p. 2–3.

29 Ibid., p. 3.

պատմությունը» սահմանազատել պատմության մյուս տարատեսակներից (սեփական տարածք ձևավորելու նպատակով), այդուամենայնիվ, այն աչքի է զարնում հենց իր «սահմաններ չճանաչելու կողմնորոշվածությամբ». «Մտակեցվածքների պատմությունը, ինչպես և խորքային մեկնաբանություններ որոնող ցանկացած պատմություն, սահմաններ չի ճանաչում: Բացի դրանից՝ այն առանձնացված չէ պատմության այլ ստորաբաժանումներից: Հոգեբանական պատմությունը մեկուսացնել փորձելը (անգամ գաղափարների ու զգացմունքների պատմության կամ գաղափարների սոցիալական պատմության անվան ներքո) անհույս ձեռնարկում է»[30]:

Այս համապատկերում ուշագրավ է և «մտակեցվածք» հղացքի զուգորդումը սոցիալական հարաբերությունների և մտային միջոցների հետ: Դրանցից են «մտային կառույցներ» (structures mentales) և «մտային պատահակցություններ» (conjonctures mentales), «մտային ռազմավարություններ» (stratégies mentales), մտային կեցվածքներ (attitudes mentales), «հոգեբանական կլիմա» (climat psychologique) և «հոգեբանական համաճարակներ» (épidémies psychologiques), «աշխարհատեսություն» (vision du monde), մտային հորիզոններ (horizons mentaux) և այլ եզրույթները: Այստեղից էլ՝ դրան համարժեք հղացքների բազմակիությունը, որոնք հարաբերականորեն կայունություն են ձեռք բերում «աշխարհատեսություն» հղացքի համատեքստում, քանի որ վերջինս, ըստ Մանդրուի՝ «լիիրենով ծածկում է հասկացությունների ողջ համալիրը (ինչպես ինտելեկտուալ, այդպես և էթիկական), որոնց օգնությամբ անհատներն ու խմբերն ամեն օր մտածում և գործում են»[31]: Նկատենք, որ «աշխարհատեսություն» հղացքը[32] ենթադրում է երկու մակարդակ. մի կողմից՝ այն կարող է համարժեք լինել «մտակեցվածքին»[33], բայց և մյուս կողմից՝ լինել «մտային կառույցի» (structure mentale) հիմնարար տարրը[34]:

Նման տարբերակումների և վերամիավորումների համապատկերում Մտակեցվածքների պատմության գործառական տարորոշվածությունն ու միջոցների բաշխումը համապատասխանում է ժամանակային տևողությանը (կառույցին), քանի որ նրան բնորոշ են «ռիթմի և կշռույթների (cadences)» հարաբերությունները[35]: Ըստ այդմ՝ «մտակեցվածքների պատմությունը» ներկայանում է իբրև ժամանակային ոլորտի պատկեր, ավելի կոնկրետ՝ որպես պատմությունն իր տարբեր չափումներով ներառող, համակարգող և մեկը մյուսին փոխանցող ժամանակային տևողությունների

30 **Р. Мандру**, Франция раннего Нового времени. 1500–1640. Эссе по исторической психологии. М.: Территория будущего, 2010, с. 305.

31 **R. Mandrou**, Introduction à la France moderne (1500–1640). Essai de psychologie historique, Paris, Albin Michel, 1961, p. 342.

32 Տես «Աշխարհատեսություն» (vision du monde) հղացքը, որը զուգակշռում է գերմաներեն Weltanschauung-ին, Մանդրուն վերցրել էր ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ Լյուսիեն Գոլդմանից (Տես **L. Goldmann**, Recherches dialectiques, Paris, Gallimard, 1959, p. 46), սակայն օժտելով այն ավելի ընդգրկուն իմաստով:

33 **А. Лазарев**, Робер Мандру и судьба исторической психологии Люсьена Февра, в книге: **Р. Мандру**, Франция раннего Нового времени. 1500–1640. Эссе по исторической психологии. М.: Территория будущего, 2010, с. 25

34 Տես **Р. Мандру**, Франция раннего Нового времени. 1500–1640. Эссе по исторической психологии, М.: Территория будущего, 2010, с. 283

35 Տես **L. Trénabd**, "L'histoire des mentalités collectives: les pensées et les hommes. Bilan et perspectives". In: Revue d'histoire moderne et contemporaine, Tome XVI, 1969, p. 657.

միասնություն: Այսու՝ մտակեցվածքներին հատուկ է ժամանակի սեփական տևողությունը[36]: Թե՛ Դյուբին, թե՛ Մանդրուն մտակեցվածքները զետեղում են ժամանակի բրոդելյան եռառիթմ տևողության ծիրում[37], ըստ որի՝ «մտային համակցությունները», համընկնելով «տնտեսական համակցություններին», միմյանցից տարբերվում են «տևողությամբ» [38]: Ըստ այդմ էլ կարելի է առանձնացնել մտակեցվածքների երեք տարատեսակ՝ «կարճ տևողության» («իրադարձային կամ քաղաքական», անգամ «ժուռնալիստական մտակեցվածքներ»), «միջին տևողության» («տնտեսական մտակեցվածքներ») և «երկար տևողության» («քաղաքակրթական մտակեցվածքներ»)[39]: Ընդ որում՝ ժամանակային յուրաքանչյուր տևողության մեջ այսպես թե այնպես դրսևորվող մտակեցվածքներն ու մտային բոլոր միջոցները միայն ժամանակի քաղաքակրթական տևողության ծիրում է, որ հանդես են գալիս ներդաշնակ միահյուսվածությամբ: Այլորեն ասած՝ ժամանակային վերաբերությունների մեջ դնելով՝ հնարավոր է դառնում պատմական ամբողջի վերհանումը՝ այն չափազանց դանդաղընթաց վիճակը, որը հայտնի է իբրև «անշարժ պատմություն»: Ուստի երբեմն, Բրոդելին հետամուտ, կարելի է խոսել նաև մտակեցվածքի չորրորդ տարատեսակի մասին, որը ծավալվում է «չափազանց երկար տևողության» համածիրում («անշարժ մտակեցվածք»): Այստեղից էլ՝ մտակեցվածքների ժամանակային տեղաբաշխումն ու միավորումը տեսանելի են դարձնում մտքի, գիտակցության ոլորտում տեղի ունեցած փոխկերպությունների կապը նյութական փոխակերպությունների հետ: Ավելին՝ ի չիք են դարձնում այն թյուր պատկերացումը, թե «մտային կառույցներն» անշարժ են, զի «Մտակեցվածքների ոլորտում, ինչպես և ցանկացած այլ [ոլորտում], գոյություն չունեն անշարժ կառույցներ, այլ կան մշտական փոխներգործություններ կառույցների և պատահակցությունների (conjonctures) միջև»[40]:

Փոխակերպությունների համատեքստում հույժ կարևոր է ուշադրությունը չսևեռել միայն տարժամանակյա իրողությունների վրա, զի «Տարժամանակյա (դիաքրոնիկ) մոտեցումը չափազանց հաճախ է պոկվում իրականությունից»[41]: Միևնույն ժամանակ հարկ է անդադար համադրել բազմակերպ տևողությունները և «[ա]ռանձնացնել սոցիալական իրականության ու գաղափարաբանական պատկերացումների տարբերություններն ու անհամապատասխանությունները, որոնք չեն զարգանում կատարյալ համաժամանակայությամբ»[42]: Ընդ որում՝ «մտակեցվածքներն» այստեղ մտածված չեն իբրև «լրացուցիչ առարկա (objet supplémentaire)», այլ արտահայտում են ամբողջի վերահաստատման պահանջ[43]: Այստեղից էլ՝ Մտակեցվածքների

36 Տես **F. Dosse**, L'histoire en miettes. Des Annales a la "nouvelle histoire", Paris: La Découverte, 1987, p. 209.
37 Տես **G. Duby**, "L'Histoire des mentalités", in Ch. Samaran (ed.), **L'Histoire et ses methods (**Encyclopédie de la Pléiade (n°11)), Gallimard, Paris, 1961, pp. 949; **Ж. Дюби**, "Развитие исторических исследований во Франции после 1950 года", Одиссей. Человек в истории, М., 1991, с. 20.
38 **Р. Мандру**, Франция раннего Нового времени. 1500–1640, с. 302.
39 **F. Dosse**, op. cit., p. 209; **Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia**, op. cit., p. 234.
40 **Р. Мандру**, Франция раннего Нового времени. 1500–1640, с. 297.
41 **G. Duby**, Vendredi, entretien avec l'auteur, 4 janvier 1980.
42 **F. Dosse**, op. cit., p. 210.
43 Տես **F. Dosse**, op. cit., p. 210.

պատմության և Համընդգրկուն պատմության համադրելիության հեռանկարը[44]. «Մտակեցվածքների պատմությունն անօտարելի մասն է ընդհանուր պատմության, որն ընկալվում է ոչ թե իբրև Միշլեի իդեալական և ռոմանտիկական երազանք, այլ իբրև մեթոդաբանական պահանջների արժեք, որոնք կիրառվում են հետազոտության յուրաքանչյուր շրջափուլում»[45]:

Այսու՝ Համընդգրկուն պատմությունը շարունակությունն է Մտակեցվածքների պատմության և, որոշ իմաստով, ամփոփում-ավարտը: Ըստ այսմ՝ Համընդգրկուն պատմության հղացքը ենթադրում է մտակեցվածքների միջոցով ավելի խորքային իրողությունների հայտնաբերումն ու ըմբռնումը: Այլ կերպ ասած՝ Համընդգրկուն պատմության հետ հարաբերությամբ Մտակեցվածքների պատմությունը միայն ներունակորեն է Համընդգրկուն պատմություն: Պատմության այս կերպերի բաղկացուցիչներն անցնում են մեկը մյուսին և միավորվում են ոչ միայն անշարժ, այլև այլակերպվող, շարժուն հարաբերությունների համատեքստում: Ասվածը ենթադրում է բոլոր այդ չափումների զանազան համադրությունների ամբողջություն, որը երբեք չի ավարտվում: Մյուս կողմից՝ այստեղ աչքի է զարնում «մտակեցվածք» հղացքի գործառական անհամասեռության իրողությունը. «Պետք է խոստովանել, որ բոլոր տարրերից, որոնք պահանջում են վերլուծության անհրաժեշտություն, նրանք, որոնք կարող են հոգալ կոլեկտիվ մտքի պատմությունը (l'histoire du mental collectif), ավելի անորոշ ու ավելի քիչ միասնական են թվում» [46]: Իրականում, սակայն, լինելով հաստատումը դրանցից մեկի՝ ներունակորեն համընդգրկուն Մտակեցվածքների պատմությունը միևնույն ժամանակ մյուսի բացառումը չէ: Այստեղից էլ «Անմիջապես հարց է ծագում՝ այսօր, թերևս, պատմագետների համար առավել մտահոգիչ. ինչպե՞ս միավորել մտակեցվածքների պատմությունը պատմագիտական հետազոտության ամբողջին»[47]: Գործն էլ ավելի է բարդանում, երբ «գործառական անհամասեռությանը» հավելենք մտակեցվածքի սահմանման՝ հստակ ուրվագծեր չունեցող և ժամանակի ընթացքում այլակերպվող շարժունությունը, որի «խնդրաշեշտ վկայությունները հարկ է հավաքել ամենատարբեր սկզբնաղբյուրների փշրանքներից» [48]: Թե՛ Մանդրուն, թե՛ Դյուբին լուծումը գտնում են դրանց համադրման մեջ՝ Դյուբիի սահմանմամբ՝ մտակեցվածքը դիտարկելով իբրև **«շարժման մեջ գտնվող համակարգ»,** որով՝ «Խնդրա բոլոր տարրերը սերտորեն կապակցված են միմյանց. դա պատկերների, պատկերացումների համակարգ է, որոնք հասարակական ֆորմացիա կազմող տարբեր խմբերում կամ խավերում համակցվում են տարբեր կերպերով, բայց մշտապես ընկած են աշխարհի և այդ աշխարհում իր տեղի մասին մարդկային պատկերացումների հիմքում և, հետևաբար, որոշարկում են մարդկանց վարքն ու վարմունքը» [49]:

Արդյունքում մտակեցվածքների ըմբռնումը հիմնովին ձևափոխվեց:

44 Տե՛ս **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 162.
45 **Р. Мандру**, Франция раннего Нового времени. 1500–1640, с. 305.
46 **G. Duby**, Les sociétés médiévales: une approche d'ensemble, In: Annales. Économies, Sociétés, Civilisations, 26e année, 1 (1971), p. 12.
47 Ibid., p. 12.
48 **Ж. Дюби**, Развитие исторических исследований во Франции ..., с. 52.
49 Там же, с. 52.

Հատկապես երբ պարզ դարձավ, որ այս կամ այն անհատի, այս կամ այն հանրույթի մտակեցվածքը որոշարկվում է ոչ թե պարզապես որևէ այլ անհատի կամ հանրույթի հետ նրանց հարաբերությամբ, այլ հատկապես որոշակի կարգի մեջ ներառվածությամբ: Դյուբիի բնորոշմամբ՝ «Մարդկանց վարքը ձևավորվում է ոչ այնքան նրանց իրական վիճակից, որքան այդ վիճակի, ամենօրյա մոդելների մասին նրանց սովորական թյուրըմբռնումներից, որոնք միայն մասնակիորեն նյութական իրականությունը հիշեցնող մշակույթի արդյունք են»[50]: Ըստ այսմ՝ «մտակեցվածքների պատմության» համատեքստում փոխազդում և աստիճանակարգված ինքնակազմակերպվում են սոցիալական հարաբերություններն ու մտային միջոցները (ressources mentales)՝ «խաշխարհը, մարդկանց և Աստծուն վերլուծելու, նկարագրելու և մեկնաբանելու համար»[51]: Ընդ որում՝ սոցիալական հարաբերություններն ու մտային միջոցները ենթադրում են փոխհարաբերությունների մի այնպիսի ամբողջություն, որը ներառում է «ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր, հանապազօրյա հացից մինչև միստիկներ»[52], ինչպես նաև «խմբերի կամ ընդհանուր հանրույթի (société globale) կողմից ընդունված պատկերացումներն ու երևակայությունները, առասպելներն ու արժեքները, որոնք կազմում են կոլեկտիվ հոգեբանությունների բովանդակությունը»[53]: Նման ընդգրկման շնորհիվ հնարավոր է դառնում խոսել մտակեցվածքների պատմության՝ իբրև համակարգի ու գործընթացի մասին: Ըստ այդմ՝ մտակեցվածքների պատմությանը հատուկ է ներքին մի կազմակերպվածություն, շնորհիվ որի՝ այն դրսևորվում է իբրև կառուցվածքային ամբողջություն, որի համատեքստում «Մտակեցվածքների պատմության նպատակն է վերականգնել վերաբերմունքները, արտահայտություններն ու լռությունները, որոնք թարգմանում են աշխարհատեսություններն ու կոլեկտիվ զգացմունքները»[54]: Այստեղից էլ՝ մտակեցվածքների պատմության գործառական միասնականությունը համապատասխանում է այդ ոլորտի ամբողջական համակարգային կազմակերպմանը:

Մտակեցվածքների պատմության աննալական մեկ այլ ուղղություն էր **մտակեցվածքների «շարային» կամ «քանակային» պատմությունը**, որի վառ ներկայացուցիչներից էին, ինչպես վերն ասացինք, **Պիեռ Շոնյուն, Միշել Վովելը, Լը Ռուա Լադյուրին, Ֆրանսուա Ֆյուրեն, Ֆիլիպ Արիեսը և այլք**[55]: Նկատենք, որ այս ուղղության ներկայացուցիչների մոտեցումները ևս տարբերվում են միմյանցից՝ կազմելով առանձին ենթաուղղություններ: Չնայած նման տարբաժանման՝ այդ ենթաուղղությունները կազմում են մեկ ամբողջություն: Ինքնօրինակ մի ամբողջություն, որի համատեքստում բացահայտվում են հետազոտական նոր տիրույթներ՝ ըստ

50 **G. Duby**, Ideologies in social history, In: Jacques Le Goff and Pierre Nora (eds.), Constructing the Past: Essays in Historical Methodology, Cambridge University Press, 1985, p.151.
51 **Р. Мандру**, Франция раннего Нового времени. 1500–1640, с. 99.
52 **R. Mandrou**, Introduction à la France moderne. Essai de psychologie historique, Paris, Albin Michel, 1961, p. XIII.
53 **R. Mandrou**, "L'histoire des mentalités", in: Encyclopaedia Universalis, vol. 8, 1977, (1" éd. 1971), p. 436.
54 Ibid., p. 436.
55 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Ս. Հովհաննիսյան**, Ֆերնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վէմ», N 1 (2011), էջ 98–119:

տնտեսական փորձառության և ժողովրդագրության (Շոնյու, Լադյուրի)[56], կյանքի և մահվան (Արիես, Վովել)[57], հեղափոխությունների (Ֆյուրիե)[58] և այլնի նկատմամբ վերաբերմունքի: Ընդհանուր առմամբ, այս համատեքստում մտակեցվածքների պատմությունը հոգ է տանում նախ և առաջ մեծ «գոյութենականի (Existenziale)» մասին, ինչպես հիվանդության և մահվան, սեռականության և սիրո[59]:

Ինչպես անվանումն է հուշում, մտակեցվածքների պատմության վերոհիշյալ ուղղությունը զարգանում էր «շարային» և «քանակային» պատմությունների հղացքի համածիրում: Այսու՝ որքանով վավեր է «կրկնվող, շարային, քանակայնացվող (quantifiable) փաստերին» տրվող առաջնությունը, նույնքան վավեր է մտայինին տրվող առաջնությունը[60]: Եվ խորքային առումով մտակեցվածքների «շարային» կամ «քանակային» պատմությունը ևս կրում էր **Էռնեստ Լաբրուսի** տեսության ազդեցությունը[61]: Սա նկատելի դարձավ հատկապես այն ժամանակ, երբ 1965 թ. Լաբրուսը Սենտ-Կլոուդի համաժողովում հայտարարեց, որ «քանակային [մեթոդը] հաղթական է սոցիալական պատմության մեջ»[62]: Համաձայն լաբրուսյան մոտեցման՝ քանակային, մասնավորապես շարային մեթոդների միջոցով մտակեցվածքների հետազոտությամբ է հնարավոր յուրացնել այսպես կոչված «պատմության երրորդ մակարդակը» (un troisteme niveau de l'histoire)՝ նկատի ունենալով աննալական տնտեսական, սոցիալական և քաղաքակրթական մակարդակներից վերջինը՝ քաղաքակրթականը)[63]: Շոնյուի ձևակերպմամբ՝ «քանակականը երրորդ մակարդակում»[64]: Այլորեն ասած՝ եռաչափ տրոհումը վերամիավորվում է ավելի բարձր՝ «հակառակ հեռանկարի» մակարդակում: Սա այն փոխակերպվող և փոխակերպող շեմն է, որտեղ բոլոր այդ երեք մա-

56 Տես **P. Chaunu**, Séville et l'Atlantique (1504–1650), Paris, SEVPEN, 12 volumes, 1955–1960; Idem: La Civilisation de l'Europe classique, Paris, Arthaud, 1966; Idem: Démographie historique et système de civilisation, Rome, EFR, 1974; **E. Le Roy Ladurie**, Les Paysans de Languedoc (thèse), SEVPEN, 1966.; Idem: Histoire du climat depuis l'an mil, Flammarion, 1967; Idem: Montaillou, village occitan de 1294 à 1324, Gallimard,1975; Idem: Le Carnaval de Romans: de la Chandeleur au Mercredi des cendres (1579–1580), Gallimard, 1979:

57 Տես **Ph. Ariès**, L'Enfant et la vie familiale sous l'Ancien Régime, Plon, 1960; Idem: L'Homme devant la mort, Seuil, 1977; Idem: Images de l'homme devant la mort, Seuil, 1983; **M. Vovelle**, Vision de la mort et de l'au-delà en Provence du XVe au XIXe siècle d'après les autels des âmes du purgatoire, (Gaby Vovelle-ի հետ միասին), Paris, A. Colin, 1970; Idem: Piété baroque et déchristianisation en Provence au XVIIIe siècle. Les attitudes devant la mort d'après les clauses de testaments, Paris, Seuil, 1973; Idem: Mourir autrefois, Paris, Gallimard / Julliard, 1974:

58 Տես **F. Furet**, La Révolution (Denis Richet- հետ միասին), Paris, Librairie Arthème Fayard, 1965; Idem: Penser la Révolution française, Paris: Éditions Gallimard, coll. «Bibliothèque des histoires», 1978.

59 Տես **U. Raulff**, "Die Annales E.S.C. und die Geschichte der Mentalitäten", in: Gerd Jüttemann (Hrsg.), Die Geschichtlichkeit des Seelischen. Der historische Zugang zum Gegenstand der Psychologie, Weinheim, Beltz Verlag, 1986, s. 159; **P. Chaunu**. L'économie: Dépassement et prospective, In: J. Le Goff et P. Nora (eds.), Faire de l'histoire, 3 vols., V.2: Nouvelles approches, Paris: Éditions Gallimard, 1974, p.51–73.

60 Տես **P. Ricoeur**, La Mémoire, l'Histoire, l'Oubli, Paris: Le Seuil 2000, p. 245.

61 Տես **К. А. Агирре Рохас**, Критический подход к истории французских "Анналов", М., Издательство: Кругъ, 2006, с. 151.

62 **M. Perrot**, The Strengths and Weaknesses of French Social History, Journal of Social History, Vol. 10, No. 2, 10th Anniversary Issue: Social HistoryToday and Tomorrow? (Winter, 1976), p. 172.

63 Տես **E. Labrousse**, La Crise de l'economie frangaise a la fin de l'Ancien Regime et au debut de la Revolution, Paris: PUF, 1944; **G. Delanty, E. F. Isin**, Handbook of Historical Sociology, London: Sage Publications Ltd 2003, p. 171; Տես **P. Burke**, op. cit., p. 74.

64 **P. Chaunu**, Un nouveau Champ pour l'histoire sérielle: Le quantitatif au troisième niveau, In: **F. Braudel**, Mélanges en l'honneur de Fernand Braudel, Vol. 2 (Méthodologie de l'histoire et des sciences humaines), Toulouse: Privat, 1972, p. 105–125.

կարդակների վերլուծություն-համադրությունն իրականացվում էր «հակառակ հեռանկարից», թեպետ «Երրորդ մակարդակի» գիտական նվաճումը դեռ ընթացքի մեջ էր, քանի որ, ըստ Շոնյուի, կոլեկտիվ միտքը պատմագետները դեռ կամ վատ են նույնացնում, կամ էլ վատ են քանակայնացնում՝ էլ չասած «կոլեկտիվ հուզականության» մասին[65]:

Այդպիսով, հիմնական արդյունքներն առանձնացնելու համար պատմագետը նախ, ստվերելով մեխանիզմները, հետազոտում է խոշոր տնտեսական և ժողովրդագրական չափորոշիչները (միկրոտնտեսություն), հետո հետազոտում է տնտեսության առանձին հատվածների միջև սոցիալական կապերն ու արդյունաբերական հարաբերությունները (միկրովերլուծություն), ապա «վերադարձ է կատարվում դիտարկվող ժամանակաշրջանի ժողովրդագրական և տնտեսական էվոլյուցիայի ժամանակագրությանը, և իրականացվում են անհրաժեշտ ճշտումներ»[66]: Միշել Վովելի բնորոշմամբ՝ «անցումը հասարակական կառույցներից հարաբերություններին և կոլեկտիվ ներկայացումներին ներառում է մարդկային իրական կյանքի և պատկերների բարդ միջնորդությունների ողջ հիմնախնդիրը, անգամ ֆանտաստիկ պատկերացումները, որոնք մարդիկ ստեղծում են և որոնք էական են մտակեցվածքների պատմությանը դիմելու համար»[67]:

Իսկ քանակական գործիքակազմը, ըստ Շոնյուի, ընդամենը միջնորդ է կառույցները բացահայտելու (լավագույն դեպքում՝ նրանց փոխաշրջության, անգամ բաղդատման) համար, որոնց բաղդատման ռիթմը ենթարկվում է ճշգրիտ կշռադատության: Հենց այդպես է քանակը փրկում որակը, բայց «տեսակավորված և միատարրացված որակը»[68]: Մի բան, որն անտեսվում էր «պատմություն-հիմնախնդիր» հղացքի կողմնակիցների կողմից, որոնք հափշտակված էին «չափազանց երկար տևողության» տեսությամբ[69]: Այսու, տվյալների (օրինակ՝ կտակների) զանգվածային հավաքագրման և «շարային» կամ «քանակական» մշակման դեպքում դրանք «գերազանց սկզբնաղբյուրներ են ստեղծում մտակեցվածքների պատմության» համար[70], որոնք՝ որպես այդպիսիք, մինչ այդ գոյություն չունեին: Ըստ այդմ՝ մտակեցվածքների շարային կամ քանակային պատմության ներկայացուցիչները հետազոտական տվյալները ենթարկում էին համակարգչային մշակման՝ կազմակերպելով դրանք ընդգրկուն «շարքերի» մեջ, որտեղ «շարքի զուգակերպը մի քաղաքակրթությունից կամ դարաշրջանից մյուսը սովորությունների, համաձայնագրերի տեսակների հարաբերական մշտականություն ապահովող միանմանությունն է»[71]:

---

65 Տես **P. Chaunu**, "Les Entraves au changement dans les sociétés et les mentalités en Amérique Latine au XVIIIe siècle", Revue d'histoire économique et sociale, Vol. 51, No. 1 (1973), p. 58.

66 **G. Bois**, Crise du feodalisme: economie rurale et demographie en Normandie du debut du XIVe siecle au milieu du XVIe siecle, Paris: FNSPEHESS, 1976, p. 387.

67 **M. Vovelle**, Ideologies and Mentalities, Chicago: University of Chicago Press, 1990, p. 12.

68 **P. Chaunu**, "Un nouveau Champ pour l'histoire sérielle: Le quantitatif au troisième niveau", In: **F. Braudel**, Mélanges en l'honneur de Fernand Braudel, Vol. 2 (Méthodologie de l'histoire et des sciences humaines), Toulouse: Privat, 1972, p. 227.

69 Տես **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 163.

70 Տես **P. Chaunu**, "Documents traditionnels pour une histoire nouvelle (à propos d'un nouveau volume des Instructions aux ambassadeurs) L'Espagne au tournant du XVIIIe siècle", Revue d'histoire économique et sociale, Vol. 39, 3 (1961), p. 388.

71 **P. Ricoeur**, Temps et récit. Tome I: L'intrigue et le récit historique, Le Seuil, 1983, p. 243.

Արդյունքում հնարավոր է դառնում առանձնակի կամ անգամ բացառիկ ուշադրություն դարձնել «տիպական, կրկնվող, ընդհանուր միտումի կամ օրինաչափությունների տակ առբերվող փաստերին ու երևույթներին՝ անտեսելով եզակի և անկրկնելի փաստերն ու երևույթները»[72]: Միևնույն ժամանակ մտակեցվածքների շարայնացմամբ կամ քանակայնացմամբ առավելագույնս են բացահայտվում նաև կախվածությունները (օրինակ՝ «կահույքների, եկեղեցիների և գյուղացիական կացարանների շարային վերլուծության դեպքում»)[73], պայմանով, որ միավորիչ հատկանիշների ֆոնին չստվերվեն տարբերակիչ հատկանիշները: Այսու՝ մտակեցվածքների պատմությունը որոշարկվում է իբրև «մարդկային կյանքի և դրա ձևի օբյեկտիվ պայմանների միջնորդությունների և դիալեկտիկական կապերի հետազոտություն, որում մարդիկ պատմում են իրենց պատմություններն ու վերապրում դրանք»[74]:

Իսկ մինչ այդ գործնականում պատմությունից բացառված «լռող մեծամասնությունը» ոչ միայն ընդունակ է դառնում խոսել «խորհրդանիշերի, ծեսերի, ժեստերի, սովորույթների, հավատալիքների և սնահավատությունների լեզվով»՝ պատմագետներին հասցնելով «իր հոգևոր համընդհանուրի թեկուզ մասնիկները»[75], այլև դրանց համադրական հեռանկարում բացահայտել տվյալ ժամանակաշրջանին հատուկ մտակեցվածքը: Ուշադրության նման սևեռումը «փոփոխականը», «ակնթարթայինը» կամ «անցողիկը» ներկայացնում է «անփոփոխի», «տևականի» կամ «անանցի» ծիրում, և այդ «մշտականությունն» է, որ «թույլ է տալիս ընդհանուր գծերով իմանալ, թե ինչ կարելի է սպասել այս կամ այն դարաշրջանի մարդկանցից»[76]:

Այդպիսով նաև փորձ էր արվում «վերականգնել» կարճ կամ իրադարձային, այն է՝ մարդկային ժամանակաչափը[77], որը հարաբերակցվում է կարճ ժամանակում (դիցուք՝ «մեկ տասնամյակում») մարդկանց, հետևաբար՝ մտակեցվածքների փոխակերպման հույժ կարևոր հարցադրման հետ[78]:

Վերոհիշյալ դիտարկումներում մտակեցվածքների պատմությունը վերցվում էր թե՛ ժամանակի մեջ, թե՛ ժամանակից «դուրս» պարառվածությամբ: Ուստի հետազոտական սևեռումի հիմնական խնդիրն էր վեր հանել մտակեցվածքների տևականությունն ու անփոփոխությունը: Սա մտակեցվածքների պատմության ընդունելի տարբերակներից մեկն է, բայց ոչ միակ հնարավորը: Ուստի մտակեցվածքների քանակային պատմության ներմուծմամբ մտակեցվածքների ընդհանրական, անփոփոխ տեսակին հակադրվում-համալրում է մասնակի, փոփոխական կերպը: Այլ կերպ ասած՝ մտային կառույցներն իրենց մշտականության, փոխաշրջումի, մասնատման ժամանա-

72 **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 163.
73 **P. Chaunu**, "L'économie: Dépassement et prospective", In: **J. Le Goff** et **P. Nora** (eds.), Faire de l'histoire, 3 vols., V. 2: Nouvelles approches, Paris: Éditions Gallimard, 1974, p. 69.
74 **M. Vovelle**, Ideologies and Mentalities, p. 12.
75 **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 267.
76 **P. Ricoeur**, Temps et récit. Tome I: L'intrigue et le récit historique, Le Seuil, 1983, p. 243.
77 Տես **J. Glénisson**, "Uma História entre duas erudições (Notas sobre algumas práticas e alguns dogmas da atual historiografia)", em "Revista de história", CX.Goubert, P., 1960 p. 451.
78 **M. Vovelle**, "La Mentalité Révolutionnaire", Historyka. Studia Metodologiczne, Special Issue, 2012, p. 234.

կավոր որակների շնորհիվ ներառվում են պատմության դաշտի մեջ[79]: Իսկ այդ բևեռացումների միջև եղած հեռավորությունը հարստանում է բազմաթիվ անցումների ու միտումների աստիճանականությամբ: Ըստ այդմ՝ բուն պատմությունն արտաբերվում է այս երկու պայմանական բևեռացումներից: Մասնավորապես՝ մտակեցվածքների փոխակերպումների և այլացումների սահմանը դուրս է բերվում թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ մտակեցվածքներից: Նպատակն է՝ որսալ մարդկության մտակեցվածքի առավել թաքուն և առավել խորքային փոփոխությունները (ազգաբնակչության ծնելիություն, երկարակեցություն, խտությունների տեղաբաշխվածություն և այլն)[80]: Անտուան Պրոյի բնորոշմամբ՝ «սա պատմություն է, որը թույլ է տալիս փորփրելով հասնել մինչ կառույցներ և համեմատել դրանք միմյանց հետ»[81]:

Ուշագրավն այստեղ այն է, որ մտակեցվածքների քանակային պատմության կողմնակիցներից նրանք, ովքեր հետազոտության համար վերցնում են ժամանակի «երկար տևողությունը» (Լադյուրի, Արիես, Շոնյու և այլք), ավելի շատ ուշադրությունը սևեռում են մտակեցվածքների «անշարժության», ամենաքիչը փոփոխությունների ենթակա մակարդակի վրա[82] և չեն դիտարկում դրանց անփոփոխության, պահպանման, տևականության պատճառները (Լադյուրիի դիպուկ բնորոշմամբ՝ «մտակեցվածքները քվեարկում են ընդդեմ պատմական ժամանակի»[83]): Դրան հակառակ՝ հետազոտողներից նրանք, ովքեր իրենց ուշադրությունը սևեռում են փոփոխականի, կարճատևության վրա (Վովել, Ֆյուրե և այլք), կարևորում են նաև փոփոխությունների պատճառները: Այլ կերպ ասած՝ մտակեցվածքների միասնականության մեջ կարևորում են «միտքը փաստերի պարզ հանրագումարին հանգեցնող մտային ատոմիզմը»[84]: Այն է՝ մտակեցվածքների քանակային պատմության մեջ անհրաժեշտություն է դառնում իրադարձությունների՝ իբրև իրականությունը բացահայտելու միջոցի ներմուծումը: Դրա շնորհիվ «իրադարձությունը դառնում է իրականությունը բացահայտելու միջոց, որն անհասանելի է այլ միջոցներով, իսկ նյութական կառույցների հետազոտություններից անցում է կատարվում մտակեցվածքների հետազոտությանն այն դեպքում, երբ ժամանակային և տարածական շրջանակներով չկապակցվածությունը գերակայում է ներկայի հետ հարաբերության նկատմամբ»[85]:

Այս դեպքում մտակեցվածքների պատմությունը կարող է ծավալվել ոչ միայն հորիզոնական ուղղությամբ՝ մտակեցվածքի տվյալ տարատեսակի սահմաններում, այլև ուղղահայաց ձևով՝ նրա տարբեր մակարդակների (մարդու բնույթի, իր իսկ մարմնի նկատմամբ վերաբերմունքի, սիրո պատմության, անձնական կյանքի և այլնի) միջև՝ ի հայտ բերելով պատմամշա-

79 Տես **P. Ricoeur**, Temps et récit. Tome I: L'intrigue et le récit historique, Le Seuil, 1983, p. 158.
80 Տես **Ph. Ariès**, Histoire des populations françaises et de leurs attitudes devant la vie depuis le XVIIIe siècle, Seuil, "Points Histoire", 1971. p. 13.
81 **А. Про**, указ. соч., с. 220.
82 Տես **Ж. Дюби**, История ментальностей, в книге: История ментальностей, историческая антропология. Зарубежные исследования в обзорах и рефератах, М.: РГГУ, 1996, с. 20-21.
83 **Э. Ле Руа Ладюри**, Монтайю, окситанская деревня (1294 – 1324), Пер. с фр. В. А. Бабинцева и Я. Ю. Старцева, Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2001, с. 345.
84 **П. Шоню**, Цивилизация Просвещения, Екатеринбург; М.: У-Фактория; АСТ, 2008, с. 201.
85 **А. Про**, Двенадцать уроков по истории, М.: Российск. гос. гуманит. ун-т, 2000, с. 46.

կութային սկզբնաղբյուրների անսպառ պաշարներ[86]: Խորքային առումով մտակեցվածքների պատմության քանակայնացմամբ «հորիզոնական» և «ուղղահայաց» շարժումները վերածվում են առավել համադրական, կենսականորեն հագեցած պատմության: Նման համադրմամբ, ըստ Վովելի, լավագույնս կարելի է վերծանել «ձգնաժամի շրջափուլերը, առավել արմատական սոցիալական փոփոխությունները, ավելի խորքային տեկտոնական տեղաշարժերը»[87]: Հարկավ, նկատի ունենալով և այն, որ ի տարբերություն հասարակությունների՝ մտակեցվածքներն ավելի դանդաղ են փոփոխվում: Եվ պատահական չէ, որ մտակեցվածքների քանակայնացման կամ շարայնացման կողմնակիցները (օր. Արիեսը), ի տարբերություն Դյուբիի և Մանդրուի, առաձնակի ուշադրություն են դարձնում տարածաշրջանային, այլ ոչ թե սոցիալական տարբերություններին[88]:

Այսպես՝ մտակեցվածքների քանակային և շարային պատմությունը գտնվում է ժամանակի թե՛ «կարճատև», թե՛ «միջին» և թե՛ «երկար» տևողությունների փոխլրացական հարաբերությունների մեջ, երբ քանակայնացմամբ կամ շարայնացմամբ միավորվում-ներհյուսվում է թե՛ տևողություններից յուրաքանչյուրին, թե՛ համադրական ամբողջին: Սակայն, անդրադառնալով տևողությունների միավորմանը, հարկ է նշել, որ հետազոտողը կարող է ընկնել «սխեմատիկության ծուղակը», որի արդյունքում սխեման կամ սխեմաները կարող են ծածկել իրականությունը: Արդյունքում մարդկության հարուստ իրականությունը կարող է հատվել «միջինացված մտային հորիզոնի պրոկրուստյան մահճում», քանի որ այն «զետեղվում է միջոցների մակարդակում, այլ ոչ թե պատկերացումների, գործողությունների եղանակների մակարդակում, այլ ոչ թե կեցության ձևերի»[89]: Այնինչ սոցիալական պատմությունը, դրա ներքին կազմակերպումը չափազանց բարդ և առանձին դիտարկման արժանի տիրույթ է, և չի կարելի այն ներկայացնել միայն քանակային-համադրական մեթոդի կիրառման համատեքստում[90]: Արիեսի դիպուկ ձևակերպմամբ՝ «Մտակեցվածքների պատմությունը չի արվում ինչպես վաճառականական հաշվապահությունը: Հարկավոր են պատճառներ և կիրք» [91]:

Հետազոտական մեկ այլ «ծուղակ» է միտումնավորությունը, երբ սկզբնաղբյուրների քանակայնացմամբ-շարայնացմամբ հետազոտողը ստեղծում է սեփական սկզբնաղբյուրը, որն «ամբողջովին հարմարեցվում է նրա հետազոտական խնդրին»[92]: Ուստի մտակեցվածքների քանակային-շարային պատմությունը, ունենալով բազմաթիվ նրբերագներ, պահանջում է համարժեք նուրբ աշխատանք, հատկապես երբ նկատի ունենանք այն, որ այդ նրբությունները «[հ]նարավոր չէ որսալ թեպետ և հուսալի, բայց և կոպիտ մաթեմատիկական մոդելավորումների օգնությամբ»[93]:

Իր ձկունությամբ և համընդգրկունությամբ առանձնանում էր **Ժակ ԼԸ**

86 Տե՛ս **Ph. Ariès**, Un Historien du dimanche, p. 91.
87 **F. Dosse**, op. cit., p. 208; **Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia**, op. cit., p. 241.
88 Տե՛ս **Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia**, op. cit., p. 241.
89 **П. Шоню**, Цивилизация классической Европы, Екатеринбург: У-Фактория, 2005, с. 183.
90 Տե՛ս **А. Про**, указ. соч., с. 219.
91 **Ph. Ariès**, Une interpretation tendancieuse de l'histoire des mentalités, Anthinéa, 3 (2), février 1973, p. 8.
92 **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 163.
93 **А. Про**, указ. соч., с. 218.

**Գոֆֆի** տեսությունը, որը կարելի է դասել **մտակեցվածք(ներ)ի պատմության «համաբերական» ուղղությանը**: Այն ուշագրավ է նրանով, որ պատմության բրոդելյան «համընդգրկուն» հարացույցի ուղղակի մերժումը չէ: Ճիշտ հակառակը՝ միտված է լրացնելու այն և հաղթահարելու առաջացած սահմանափակությունը: Բացի դա՝ նա աչքի է ընկնում իր բազմակենտրոնությամբ՝ ի տարբերություն բրոդելյան «համընդգրկուն» հարացույցիկենտրոնամիտության: Ընդհանրացման և որոշակիացման ձգտումն այս հայեցակարգի կողմից մերժվում էր, քանի որ անհատը կամ հանրույթը միշտ չէ, որ ապրում է երկշարք կամ երկբևեռ հարաբերություններով կամ դրանցից մեկով, այլ դրանց տարբեր խաչաձևումների ու համադրությունների հարաբերություններով:

Նկատենք, որ Ժակ Լը Գոֆֆի հետազոտության կիզակետում սկզբից ևեթ առկա էր միջնադարյան մարդու «աշխարհի պատկերը» (image du monde): Ըստ այդմ բխեցվում էր և հետազոտության հիմնական առարկան՝ տարածության ու ժամանակի, աշխատանքի և հարստության, գիտնականների ու ժողովրդական մշակույթների փոխհարաբերությունների ըմբռնման հիմնախնդիրը: Ընդ որում՝ կարևորելով ոչ թե պատմության հետազոտության ուղղակի «ինչպես»-ը, այլ, ու հատկապես, նոր հիմնախնդիրներ առաջադրելն ու դրանց հիման վրա նոր սկզբնաղբյուրների և դրանց հետազոտության մեթոդների բացահայտումը[94]: Վերոնշյալն իրականություն դարձնելու համար Լը Գոֆֆը դիմում է ոչ միայն սոցիալական գիտությունների, այլև բնական գիտությունների մեթոդաբանությանը՝ կիզակետում պահելով հատկապես հնագիտությունը, կլիմայագիտությունն ու դենդրոժամանակագիտությունը (dendrochronologie)[95]: Այդ կերպ, թերևս, Լը Գոֆֆը փորձում է վերականգնել պատմության «երկար տևողության» ընթացքը, որը հընթացս աստիճանաբար բեկորվել է: Խոսքը նախ և առաջ պատմության քանակայնացման կամ շարայնացման մասին է, որոնք, չնայած ժամանակին իրենց խաղացած օգտակարությանը, այժմ արդեն բացահայտել են իրենց հնարավորությունների սահմանափակությունը[96]:

Այսու՝ իր հետազոտությունը սկսելով ցանկացած հասարակությանն ու յուրաքանչյուր մշակույթին բնորոշ տարածաժամանակային կառույցների քննարկումից՝ Լը Գոֆֆը հետազոտում է ինչպես տարածության ու ժամանակի նյութական դիտանկյունները, այնպես էլ այն պատկերացումները, որոնց միջոցով միջնադարյան մարդիկ ընկալում էին պատմական իրականությունը: Նման դիտանկյունը հեղինակին հնարավորություն է տվել ավանդական թեմաները քննարկել բոլորովին այլ հարթության մեջ, որպիսիք են տարածության և ժամանակի կառույցները (միջնադարում), նյութական պայմաններն ու առտնին պատմությունը, հասարակության միջնադարյան ըմբռնումը, մտակեցվածքները, տարբեր դասակարգերի զգայու-

94 Տե՛ս **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 226.

95 Դենդրոժամանակագիտությունը (dendrochronologie – հին հուն. δένδρον, dendron, «ծառ», χρόνος, khronos, «ժամանակ» և – λογία,–logie, «բան») – գիտակարգ՝ իրադարձությունների, բնական երևույթների, հնագիտական գտածոների և հին առարկաների թվագրման մեթոդների մասին: Այդ մեթոդներով հնարավոր է նաև վերականգնել կլիմայական և էկոլոգիական փոփոխությունները:

96 Տե՛ս **Ж. Ле Гофф**, “С небес на землю (Перемены в системе ценностных ориентаций на христианском Западе XII–XIII вв)”, Одиссей. Человек в истории. М., 1991, с. 25.

թյուններն ու հարաբերությունները, կլիման, կանացի աշխատանքի շահագործումը և այլն: Այս ոչ ավանդական թեմաների համածիրում բացվում է իրականության բոլորովին այլ՝ ուրիշ պատմություն:

Այդպես քայլ առ քայլ և բավականին զգուշորեն Լը Գոֆֆը մոտեցել է մտակեցվածքների պատմությանը, «որը միաժամանակ վերադարձնում է նյութական քաղաքակրթությունն ու մշակույթը»[97]: Եվ այստեղ է, որ նա առաջին անգամ քննարկման թեմա է դարձնում մտակեցվածքների և զգայությունների փոխհարաբերության հիմնախնդիրը՝ նշելով, որ «Հարկ է նկատել, որ քաղաքակրթագետ-պատմագետի հայացքը մտակեցվածքների և զգայությունների փոփոխություններին անխուսափելիորեն տարբեր է կրոնների և գաղափարների պատմագետի հայացքից, որը այդ փոխակերպումների մեջ փնտրում է կայուն հաստատություն հավատքի համար»[98]:

Ընդ որում, այս տարբերակման մեջ Լը Գոֆֆը ներառում է նաև երևակայությունն ու արժեքները, որոնց հիմքի վրա էլ վերլուծության թեմա է դարձնում խորհրդանշական մտածողությունը, գաղափարները, գույնը, գեղեցկությունն ու ուժը, փախուստներն ու երազանքները, սերն ու կեղծիքը, ժեստերն ու հագուստները, սնունդն ու տան կառույցը և այլն: Այսու՝ նա ուժեղացնում է մտակեցվածքների պատմությունը «գաղափարաբանությամբ, երևակայության պատմությամբ և արժեքների պատմությամբ[99]: Ընդսմին՝ այստեղ հարկ է նկատի ունենալ մտակեցվածքների և գաղափարների տարբերությունը, որտեղ «Մտակեցվածքների պատմությունը գաղափարների պատմության մեջ այն է, ինչ մշակույթի նյութական պատմությունը տնտեսական պատմության մեջ»[100]:

Այսու՝ հաղթահարվում է և թվացյալ եզրույթների կիրառման թվացյալ «անհետևողականությունը», թեպետ Լը Գոֆֆը, խոսելով մտակեցվածքների մասին, որոշ դեպքերում նախընտրում է «երևակայություն (imagination)», «զգացմունքայնություն», «խորհրդանշանայնություն», «արժեքային համակարգեր» և անգամ «գաղափարաբանություն» եզրույթները[101]: Բանն այն է, որ «մտակեցվածքայնությունն ամենուր է, այն ներթափանցում է մարդկային կյանք՝ ներկա լինելով մարդկանց գիտակցության և վարքի բոլոր մակարդակներում, այդ պատճառով էլ այդքան դժվար է բնորոշել այն, ինչ-որ շրջանակների մեջ ամփոփել»[102]: Ուստի ձևակերպումներից յուրաքանչյուրը ներկայացնում էր տվյալ եզրույթի ըմբռնման մի տարակերպը կամ նրբերանգը, բայց ոչ ամբողջությունը: Մի բան, որն հատուկ էր նաև մյուս հետազոտողներին:

Եզրույթին հատուկ այդ տարտամության արդյունքում անգամ մտակեցվածքի հետազոտության նորարարները (ինչպես Դյուբին) երբեմն հրաժարվում են եզրույթից: Ոմանք էլ հրաժարվում են այն պատմության մեջ պատճառականության կարևորագույն հասկացության վերածելու մտա-

97 **F. Dosse**, op. cit., p. 209.
98 **J. Le Goff**, Medieval Civilization 400–1500, Trans. **Julia Barrow**, Blackwell, Oxford, U. K., 1992, p. 344.
99 Տես **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 339.
100 **J. Le Goff**, "Les mentalités. Une histoire ambiguë", in J. Le Goff et P. Nora (dir.), Faire de l'histoire III. Nouveaux objets, Paris, Gallimard, 1974., p. 111.
101 Տես **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа "Анналов", с. 226.
102 Там же, с. 225.

դրության պատճառով (արհամարհելով տնտեսությունը, սոցիալական հարաբերությունները, քաղաքականությունը և այլն)[103]: Ավելի կոնկրետ՝ մտակեցվածքների սահմանման անորոշությունը բացատրվում է նրա՝ այլ գիտակարգերի հետ ունեցած հարաբերություններով: Հարաբերություններ, որոնք ուղղված են «պատմության ընդլայնմանը, որը տնտեսականի փոխարեն ուզում է լինել սոցիալական»[104], քանի որ «սոցիալականի և մտայինի հարաբերություններն ավելի բարդ են, քան տնտեսականի և հասարակության»[105]: Այդպիսի տարանջատումը հնարավորություն է տալիս ի հայտ բերել ոչ միայն ուղղակի մտակեցվածքների, այլև մեկնությունների բազմազանություն: Օրինակ՝ Լը Գոֆֆը վկայակոչում է «կրոնական մտակեցվածքը» (mentalité religieuse)՝ ի հակադրություն այն մտայնության, որը հակված էր խաչակրաց արշավանքները բացատրել սոցիալ-տնտեսական պատճառով, որը, սակայն, «ամեն ինչ չէ, որ բացատրում էր»[106]: Բայց և հարկ է նկատի ունենալ, որ մտակեցվածքների պատմությունը որոշարկվում է ոչ միայն այլ հումանիտար գիտությունների հետ շփումով և ավանդական պատմության կողմից զսպված տիրույթի հայտնությամբ[107]: Այն նմանապես հակադիր պահանջների հանգուցակետ է և երկխոսությունների մղող ուժականություն (dynamique). «Այն տեղակայվում է այնպես, որ միավորի անհատականը և կոլեկտիվը, երկարատևը և կարճատևը, գիտակցվածը և չգիտակցվածը, կառուցվածքայինը և ընթացիկը, լուսանցքայինը և համընդհանուրը»[108]:

Այսու՝ մտակեցվածքների պատմությունն իր «խաչմերուկայնությամբ» ձեռք է բերում նաև որոշակիություն, կոնկրետություն, քանի որ հավասարապես պատկանում է բազմաթիվ այլ գիտակարգերի, շնորհիվ որոնց մտակեցվածքը հանգեցվում է այնպիսի տարբերակված ամբողջության, որտեղ մասերն արտացոլվում են ամբողջի, իսկ ամբողջը՝ մանրամասների մեջ: Այդպես և «մտակեցվածք» եզրույթը «վերականգնում է պատմության այնկողմնայինը (recouvre un au-delà de l'histoire)»[109]: Այստեղից էլ, ըստ Լը Գոֆֆի, այդ տարտամությունը հենց «մտակեցվածքների պատմության ուժեղ կողմն է»[110], քանի որ պատմագետին թույլ է տալիս մերձենալ բազմաթիվ այլ գիտակարգերի հետ, որպիսիք անհրաժեշտ են պատմագիտությանը՝ «գերիշխանական հավակնություններն» ու «բարձր ռազմավարական հետաքրքրություններն» ապահովելու համար[111]:

Մյուս կողմից՝ մտակեցվածքների կոչումը մյուս գիտությունների կողմից բաց թողնվող «մնացորդները (residues)» որսալու, նրանցից սպրդող որևէ բան հայտնաբերելու» մեջ է[112], որտեղ մտակեցվածքները, սակայն, սոսկ

103 Տես **А. Я. Гуревич**, Интервью с Жаком Ле Гоффом, в книге: **А. Я. Гуревич**, Исторический синтез и Школа «Анналов», с. 339.
104 **N. Righi**, L'héritage du fondateur? L'histoire des mentalités dans l'École des «Annales», Le Philosophoire, 2003/1 (N 19), p. 173.
105 **F. Dosse**, op. cit., p. 209.
106 **J. Le Goff**, Les mentalités. Une histoire ambiguë, in op. cit., p. 107.
107 Տես Ibid., p. 107.
108 Ibidem.
109 Ibidem.
110 Ibid., p. 106.
111 Տես **Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia,** op. cit., p. 239.
112 Տես **J. Le Goff**, Les mentalités. Une histoire ambiguë, in op. cit., p. 106.

արտացոլանք (reflet) չեն[113]: Իսկ այդ մնացորդները կազմում են հետազոտության թեպետ զանցառված, բայց և հույժ կարևոր մի ոլորտ, քանի որ «Մտակեցվածքների պատմության մակարդակն առտնին և ինքնաշարժ մակարդակն է, այն, ինչը խուսափում է պատմության առանձին թեմաներից (sujets individuels)»[114]: Այսու՝ մտակեցվածքների պատմությունը թույլ է տալիս պատմության մեջ ներառվող դիպվածները մտածել իբրև հավաքական հասկացություն[115], որտեղ միասին կարող են վերցվել «Կեսարը և նրա լեգեոնների վերջին զինվորը, Սուրբ Լուին և նրա շրջանի գյուղացին, Քրիստափոր Կոլումբոսն ու նրա քառակայմ նավերի (caravels) նավաստին»[116]:

Այստեղից էլ մտակեցվածքների պատմության՝ Լը Գոֆֆի մեկ այլ սահմանումը. «Ցանկացած պատմական անհատականության մտակեցվածքը, անկախ նրա նշանակալիությունից, իրենից ներկայացնում է այն ընդհանուրը, ինչն այդ անհատը կիսում է իր ժամանակի այլ մարդկանց հետ»[117]: Այսկերպ, թերևս, ինչպես Ռոժե Շարտիեն է նկատում, գիտակցության և մտածողության հարաբերություններն այլ կերպ են հաստատվում՝ «մերձենալով դյուրքիայմյան ավանդույթի սոցիոլոգների մոտեցմանը, որոնք շեշտադրում էին մտածողության սխեմաները կամ բովանդակությունները»[118]:

Մյուս կողմից՝ ընդունելով, որ «մտակեցվածքը հասարակության և քաղաքակրթության մի կողմն է»[119], Լը Գոֆֆը, ի տարբերություն Լադյուրիի, ձգտում է վեր հանել հատկապես դրա թեկուզ դանդաղընթաց փոփոխությունները. «Մտակեցվածքները, որպես օրենք, փոփոխվում են չափազանց դանդաղ և աննկատ, և այդ տեղաշարժերը, որոնք արհամարհված են ինքնին պատմական գործընթացի մասնակիցների կողմից, կարող են հետազոտության առարկա դառնալ միայն ժամանակի մեծ մասշտաբի մեջ դիտարկելու դեպքում» [120]:

Ընդ որում՝ փոփոխությունները զարգացող տնտեսական փոխակերպություններն են, որոնք հանգեցնում են մտածելակերպերի ավելի կամ պակաս արմատական, ավելի կամ պակաս արագ փոփոխության[121]: Ուստի նա կարևոր նշանակություն է տալիս փոփոխության արժեբանական կողմնորոշմանը, որն այլ բան չէ, քան «պատմության ռացիոնալ մեթոդաբանության» ընդունում[122]: Մոտեցման նման զարգացումը, թերևս, Լը Գոֆֆի համաբերական տեսության ամենակարևոր դիտանկյունն է, քանի որ

113 Տես Ibid., p. 123.
114 Ibid., p. 111.
115 Տես **Н. Е. Копосов**, Как думают историки, М.: Новое литературное обозрение, 2001, с. 170.
116 **J. Le Goff**, Les mentalités. Une histoire ambiguë, in op. cit., p. 111.
117 Ibid., p. 108.
118 **R. Chartier**, "Intellectual History and the History of Mentalities", in: **D. La Capra** and **S. L. Kaplan** (ed.), Modern European Intellectual History. Reappraisals and New Perspectives, Cornell University Press, 1982, p. 22–23.
119 **Ж. Ле Гофф**, Другое средневековье: время, труд и культура Запада, Екатеринбург: Изд-во Урал, ун-та, 2002, с. 63.
120 **А. Я. Гуревич**, "Филипп Арьес: смерть как проблема исторической антропологии", В книге: **Ф. Арьес**, Человек перед лицом смерти, Пер. с фр./ Общ. ред. **Оболенской Св.**; Предисл. **Гуревича А.Я.**, М.: Издательская группа "Прогресс", "Прогресс– Академия", 1992, с. 12.
121 Տես **Ж. Ле Гофф**, Другое средневековье: время, труд и культура Запада, Екатеринбург: Изд-во Уральского ун-та, 2002, с. 66, 71; **Ж. Ле Гофф**, С небес на землю (Перемены в системе ценностных ориентаций на христианском Западе XII–XIII вв.), Одиссей. Человек в истории. М., 1991, с. 29.
122 Տես **Ж. Ле Гофф**, "С небес на землю", с. 44.

վեր է հանում մտակեցվածքների հետազոտության հումանիտար բնույթը: Այսու՝ շնորհիվ մտակեցվածքների հետազոտության՝ ոչ միայն պատմագետը, այլև արդի քաղաքակրթությունները կսովորեն «***ճանաչել*** (և հարգել) ***ուրիշին***» (ընդգծումը՝ Լը Գոֆֆի)[123]:

## Ամփոփում

Ամփոփելով վերոասացյալը՝ նշենք, որ եթե սկզբնապես Աննալների Երրորդ սերնդի ներկայացուցիչների մոտ նկատելի էր հեռացումը մարդու հիմնախնդրից, և տիրական էր դարձել «առանց մարդկանց պատմությունը», ապա այժմ կրկին փորձ է արվում վերականգնել նախկին մարդակենտրոն պատմության համաչափելիությունը: Իբրև համարժեք պատասխան մարտահրավերին՝ Երրորդ սերնդի ներկայացուցիչները կրկին կյանքի կոչեցին «մտակեցվածքների պատմությունը»[124]: Հընթացս ժամանակի՝ վերջինիս համապատկերում կազմավորվում է պատմության տեսության մի նոր համալիր, որտեղ մասնավորապես առանձնանում են պատմության «մտակեցվածքների», «մարդաբանական» և «հիշողութենական» հեռանկարները: Ուշագրավ է, որ դրանք շուտով լայն կիրառություն են ստանում ոչ միայն ֆրանսիական միջավայրում, այլև ձեռք են բերում համաշխարհային նշանակություն:

Այսպիսով՝ մտակեցվածքների պատմությունը, ունենալով հավաքական, ընդհանրական տևականության միտում, միևնույն ժամանակ հեռու է հավաքական կամ ընդհանրական էությունից: Ըստ այդմ՝ մտակեցվածքները համասեռ միավորներ չեն, որոնք հակադրվում կամ համադրվում են այլ համասեռ միավոր(ներ)ի: Դրանք ենթադրում են հարաբերությունների մի բազմազանություն, որի համաձիրում մտակեցվածքների տարբերությունը(ներ)ը կառուցվում են հույժ յուրօրինակ ձևերով: Այդ տարբերությունները հատկապես ակնհայտ են դառնում, երբ դրանք դիտարկվում են ժամանակի և տարածության տարբեր հարթություններում:

Հույժ հատկանշական է և այն, որ մտակեցվածքների պատմությունը, որոշակի կայունությամբ հանդերձ, անընդհատ այլակերպման ընթացքի մեջ է: Խոսքն այստեղ կոնկրետ ժամանակաշրջանի առանձնահատկությունների մասին է, որոնք ժամանակակիցների կողմից կարող են անտեսվել կամ չնկատվել, բայց որոնք հընթացս ժամանակի կարող են դառնալ նշանակալի: Շնորհիվ մտակեցվածքների տրամասության՝ հաղթահարվում է սոցիալ-պատմական վերլուծության սոցիոլոգիական վերացականությունը, և նրա առարկաները՝ հասարակական խմբերը, լցվում են մարդկային բովանդակությամբ:

Այսու՝ «մտակեցվածք» հղացքը, որը ոչ այնքան պատմագիտական հետազոտությունների յուրահատուկ ոլորտ է, որքան համադրորեն ընդգրկուն և, հնարավոր է, գիտական հետաքրքրությունների և նախասիրությունների «տարասեռ տիրույթ», նշանակալիորեն ընդլայնեց և խորություն հաղորդեց

---

123 Տես **Ж. Ле Гофф**, Другое средневековье: время, труд и культура Запада, Екатеринбург: Изд-во Урал, ун-та, 2002, с. 210, 71; **Ж. Ле Гофф**, С небес на землю, с. 29.
124 Տես **Про А.**, укз. соч., с. 45.

պատմագիտական հետազոտություններին: Եվ բոլոր այս երեք հայեցակարգերը (կառուցվածքային, շարային կամ քանակական և համաբերական) համադրվելով կազմեցին մտակեցվածքների պատմության Աննալների դպրոցի հարացույցը, որն իր հետ բերեց պատմագիտական նոր ճաշակ և զարգացման նոր խթաններ:

Եվ իրոք, Աննալների երրորդ սերունդը, որ սկզբնապես քանակային պատմության էնտուզիաստների մի ողջ բանակ էր դուրս բերել, աստիճանաբար հեռանում է բեմից, և աննալականների մի մաս (Լը Ռուա Լադյուրի, Լը Գոֆֆ և այլք) իր ուշադրությունը սևեռում է պատմական մարդաբանության ուղղությամբ:

**Սմբատ Խ. Հովհաննիսյան** – ԵՊՀ դասախոս, գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է պատմագրության, քաղաքակրթության, նշանագիտության և պատմության տեսության, նախասարդյունաբերական և արդյունաբերական դարաշրջանների հայ և համաշխարհային առևտրական կապիտալի պատմության հիմնախնդիրները:

## Summary

### THE METAMORPHOSIS OF THE ANNALES SCHOOL: THE NEW HISTORY

### Part II. The History of Mentalities: the three paradigms “Structural”, “Quantitative” or “Serial” and “Integration”

Smbat Kh. Hovhannisyan

**Key words** – History of Mentalities, “History Without People”, Human-Centered History, “Structural”, “Serial” or “Quantitative” and “Integrative” History of Mentalities.

The article discusses history of mentalities – the new paradigm worked out by the third generation of Annales School. Already in 1960s, a research project was developed in history focused on sociology and ethnology, semiotics and linguistics. It was aimed at overcoming the opposition of the two approaches in history – “history without people” and “anthropocentric history” – present already in the days of F. Braudel. The desire to respond to the like challenges led to the reconsideration of the problems of determinism in Braudel’s historical conception. Scholars traced a serious danger that the “mental framework could form a jail for the long time dimension of history.”

This was assessed as a failure of Braudel’s theory and marked a very considerable intellectual shift: if the representatives of the third generation of Annales initially followed the concept History without people”, now they intended to restore the former Anthropocentric approach to history. Consequently, the third generation again activated the concept of history of mentalities.

In general, differences in understanding of mentality are classified in the

article as follows: a. structural, b. serial or quantitative, d. integrative.


Резюме

## МЕТАМОРФОЗА ШКОЛЫ АННАЛОВ: НОВАЯ ИСТОРИЯ

### Часть II. История ментальностей: три парадигмы “Структурные”, “Количественные” или “Серийные” и “Интеграционные”

Смбат Х. Оганнисян

**Ключевые слова** – История ментальностей, «истори без людей», антропоцентрированная история, «структурные», «серийные» или «количественные» и «интеграционные» истории ментальностей.

В статье рассматривается история ментальностей – новой парадигмы, предложенной третьим поколением школы Анналов. Уже в 1960-х годах в контексте вызовов, брошенного истории лингвистикой, этнологией и социологией, разворачивается целый процесс исследований. Проблемой было преодолеть биполярное напряжение между “историей без людей” и “антропоцентрической историей”, которое возникло еще во времена поколения Броделя. И это было не случайно, что желание ответить на вызовы привело к рассмотрению вопроса активизации детерминизма и пренебрежения “историей ментальностей” в исторической концепции Фернана Броделя, согласно которой “ментальная рамка” могла бы “сформировать тюрьму для длительного времени”.

Несмотря на значительный вклад Броделя в историографию (а также в формирование школы Анналов), такая небрежность в теории истории было большим упущением. Таким образом, если первоначально у представителей третьего поколения можно было заметить устранение от проблемы человека и доминирование “истории без людей”, то теперь вновь были сделаны попытки восстановить соразмерность бывшей “антропоцентрической истории”. В качестве адекватного ответа на вызов, представители третьего поколения Анналов снова воплотили в жизнь “историю ментальностей”. Таким образом, понятие “менталитет” в контексте школы Анналов проявляется в виде разных опытов к подходам.

В целом эти различия понимания менталитета в статье классифицируются как 1) «Структурные», 2) «Серийные» или «Количественные» и 3) «Интеграционные».